

Մարիամ Կարապետյան՝  
Երևանի պետական համալսարան

ՏԵՔՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃ

ABSTRACT  
THE FEATURES OF THE INVESTIGATION OF THE TEXT: OFFICIAL  
STYLE

The present article is devoted to the investigation of the text belonging to the official style of the language which sets up a goal of exploring the main characteristics of the formal writing. The analysis involves the study of the special vocabulary and syntax which distinguishes the official from other types of writing. Formal, impersonal tone, precise terminology, specific syntax, accuracy, reliability-these are the key features of the official style of writing.

**Key words:** official documents, the investigation of the text, official style

РЕЗЮМЕ  
ОСОБЕННОСТИ ИЗУЧЕНИЯ ТЕКСТА. ОФИЦИАЛЬНЫЙ СТИЛЬ

Настоящая статья посвящается исследованию текста, принадлежащего официально-документальному стилю языка, с целью выявления основных характеристик официального письма. Исследование включает анализ вокабуляра, специфического синтаксиса, что является отличительной чертой официально-документального стиля по сравнению с другими. Формальность,

---

\* e-mail: [mariam.karapetyan@ysu.am](mailto:mariam.karapetyan@ysu.am)



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License. © The Author(s) 2024

Received: 04/06/2024

Revised: 11/06/2024

Accepted: 19/06/2024

конкретность информации, точная терминология, специфический синтаксис, аккуратность и достоверность изложения- вот основные отличительные черты официального письма

**Ключевые слова:** официальные документы, изучение текста, официальный стиль.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը անդրադառնում է լեզվի պաշտոնական ոճին պատկանող տեքստի ուսումնասիրությանը, որը նպատակ է դնում հետազոտել պաշտոնական գրագրության հիմնական առանձնահատկությունները: Վերլուծությունը ներառում է հատուկ բառապաշարի և շարահյուսության ուսումնասիրություն, որը պաշտոնական ոճի գրվածքը տարբերում է այլ տեսակներից: Պաշտոնական, անդեմ ոճ, ճշգրիտ տերմինաբանություն, հստակ շարահյուսություն. սրանք են պաշտոնական ոճի հիմնական հատկանիշները:

**Բանալի բառեր-** պաշտոնական փաստաթղթեր, տեքստի ուսումնասիրություն, պաշտոնական ոճ

Տեքստի լեզվաբանությունը՝ իբրև լեզվաբանական ինքնուրույն գիտակարգ, առաջացել է համեմատաբար վերջերս, սակայն նրա որոշակի հայեցակետեր ուսումնասիրվել են դեռևս 20-30-ական թվականներին (Մ. Бахтин, В. Пропп, В. Томашевский, Р. Якобсон և ուրիշներ):

Լեզվաբանական տեքստի համար ընդունելի առաջադրանքների ըմբռնումը նախկին խորհրդային երկրների գիտական շրջանակներում և եվրոպական ու ամերիկյան հետազոտություններում միննույնը չէ: Եվրոպացի և ամերիկացի

հեղինակները (Կ Գաուզենբլադ, Ֆ. Դանեշ, Ո. Դրեսլեր, Ո. Կոխ, Ջ. Հարիս, Փ. Հարթման, Ջ Շմիդտ) առաջնահերթորեն հետազոտում են լեզվի «կատարելության» /լիարժեքության/ և «ճշտության» պայմանները: Այդպիսի դիտարկումը տիպաբանորեն կարելի է բնորոշել որպես ձևի և բովանդակության առանձնական մոտեցում:

Խորհրդային հեղինակները տեքստը դիտարկում են իբրև ամբողջական երևույթ, որը բնութագրվում է ձևի և բովանդակության միասնությամբ, և հետազոտում են տեքստի հաղորդակցական և քերականական միավորները, պարզում են տեքստի կառուցվածքային օրինաչափությունը, որ գտնեն սահմանված լեզվական նյութի՝ տեքստի, կառուցման ճիշտ սկզբունքը (Гиндин, 1977):

Արևմտյան հեղինակները «տեքստի գործաբանությունը» դիտարկում են իբրև ուղղություն, որն ուսումնասիրում է տեքստի դերը հասարակական հաղորդակցման տեսանկյունից, տեքստերի գործառությունը (հաղորդակցության տեղեկատվական-իմաստային միավորներ)՝ «հասցեագրող-հաղորդագրություն, նշակարգ-հասցեատեր»:

Նախկին խորհրդային տարածքի հետազոտություններում տեքստի գործաբանությունն այն հարցադրումն է խնդրո առարկա դարձնում, թե ինչպես է եղանակայնությունը, բառերի ընտրությունը, հումանիշների կիրառությունը կախված տեքստի ամբողջական ուղղվածությունից: Այդ ուղղվածության նպատակն է մեխանիկական թարգմանության փորձառության և լեզվի ուսուցման դասավանդման համար երաշխիքների մշակումը (Ильенко, 1972):

Տեքստը, եթե դիտարկենք լայն իմաստով, լեզվի բանավոր և գրավոր իրացումն է: Լ. Շչերբան տեքստը սահմանում էր իբրև «լեզվական երևույթ»: «Բոլոր լեզվական արժեքները, որոնք կիրառում ենք բառարանում և քերականության մեջ, ... կարող են տրվել մեզ խոսելու կամ ըմբռնելու ժամանակ, որոնք ես անվանում եմ «լեզվական նյութ» (լեզվական երևույթների երրորդ հայեցակետ): Երրորդ հայեցակետը տվյալ հասարակական խմբի այս կամ այն դարաշրջանում սահմանված որոշակի պայմանների խոսելու և ըմբռնելու միասնությունն է: Լեզվաբաններն այն անվանում են «տեքստեր»» (Щербан, 1974: 26) :

Տեքստի լայն իմաստով դիտարկման կողմնակից են Վ. Գակը, Օ. Լապտևան, Բ. Աբրամովը, Տ. Նիկոլայևան, Վ. Օդինցովը և ուրիշները:

Սակայն տեքստի նեղ իմաստով դիտարկումը՝ տեքստը որպես լեզվի դրսևորման գրավոր ձև, ավելի լայն տարածում ունի: Այս երկու դեպքում էլ լեզվաբաններն օգտագործում են «տեքստ» եզրույթը: Այսպիսով՝ Վ. Աբրամովը, Վ. Գակը, Գ. Կոլշանսկին, Ա. Լեոնտիևը առաջարկում են ընդհանրացնել տեքստի սահմանումը իմացաբանական (էպիստեմոլոգիական) տեսանկյունից: Նրանք գտնում են, որ շրջապատող իրականության ճանաչման գործընթացում մարդու մեջ ձևավորվում են որոշակի պատկերացումներ, որոնք արտահայտվում են տեքստերի միջոցով:

Հեղինակների մի խումբ էլ, ինչպես օրինակ՝ Ի. Գալպերինը, Տ. Դրիձեն, Շ. Ռիզելը, Գ. Շատկովը և ուրիշներ, «տեքստ» հասկացությունը կապում են սոցիոլոգիայի և տեղեկատվական տեսության հետ: Ըստ նրանց՝ հասցեատիրոջ գիտակցության մեջ պետք է պատշաճ արտացոլվի այն բովանդակությունը, որը նախապես մշակվել էր տեղեկությունը փոխանցողի կողմից. բովանդակությունը արդիականացվում է տեքստի միջոցով: Այսպիսով, «ճիշտ» տեքստը փոխանցում է «հստակ» իրազեկություն և ապահովում է կատարյալ հաղորդակցում: Ավելի գործնական են Ի. Առնոլդի, Ն. Զառուբինոյի, Ի. Օլշանսկոյի, Մ. Պրավդինի

տեսանկյունները, որոնք տեքստը դիտարկում են իբրև հարաբերական պարփակ լեզվական կառուցվածք, որն ունի որոշակի հադորդակցական առաջադրանքի սահմանված ստորակարգություն:

Սահմանումների բազմազանությունը վկայում է, որ տեքստը դարձել է բազմակողմանի լեզվաբանական ուսումնասիրության առարկա (Москальская, 1979): Բազմազան հետազոտությունները հնարավորինս ամբողջացնում են տեքստի հետ կապված ողջ հարցադրումները, սակայն տեղ են թողնում նաև նոր քննարկումների և տեսակետների:

Խորհրդային տարիների լեզվաբանության մեջ ուսումնասիրվում էր տեքստի կառուցվածք սահմանող գործոնը՝ նրա բաղադրամասերի կապի և այդ կապի իմաստաբանական-շարահյուսական առանձնահատկությունների միջոցով (Арнольд, 1974): Այն աշխատությունները, որտեղ արծարծվում են տեքստի կառուցվածքային-իմաստային առանձնահատկությունները՝ կախված դրա ոճական պատկանելությունից, նվիրված են տեքստի գործառական կազմակերպմանը (Кожина, 1979):

Ուսումնասիրվում են գեղարվեստական տեքստի հիմնահարցերը. նրա բաղադրամասերի առանձնահատկությունները, լեզվական և գրականագիտական սկզբունքների վերլուծությունը (Лотман, 1972): Քանի որ տեքստն ի ցույց է դնում քերականական միավորների արդիական իմաստը, տեքստի տեսության մեջ քերականական որոշ հարցեր նորովի են ձևակերպվում (Бондарко, 1971): Տեքստի լեզվաբանության կարևորագույն ձեռքբերում է այն, որ ուսումնասիրության առարկա են դարձել ամբողջական լեզվական կառույցները, որտեղ տարբեր մակարդակի լեզվական միավորներն ինքնատիպ են փոխազդում միմյանց նկատմամբ: Տեքստի խնդիրներն ուսումնասիրվում են ավանդական լեզվաբանության խնդիրների հիման վրա: Առաջ են քաշվել այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «տեքստի քերականություն», «տեքստի շարահյուսություն» և «տեքստի ոճագիտություն»: Այդ աշխատությունների թվում են Վ. Օդինցովի (Одинцов, 1980) և Ի. Գալպերինի (Гальперин, 1981) մենագրությունները:

Վ. Օդինցովի հետազոտություններում տեքստի մասին դիտարկումները, ինչպես նաև ոճագիտական վերլուծության որոշ

սկզբունքներ ընդհանրացված են: Քանի որ «տեքստ» եզրույթը գործառական ոճի միջոցով փոխկապակցվում է «լեզու» եզրույթին, տեքստի ոճագիտությունը պետք է սահմանի և նկարագրի ոճագիտական տարրեր, որոնք ծագում են խոսքի ժամանակ տեքստի կառուցվածքի կազմակերպման հետևանքով:

Ոճաբան և ոճագետ Ի. Գալպերինն իր առջև խնդիր է դնում «նկարագրել և վերլուծել ներըմբռնմամբ ընկալվող տեքստի տարրերը, դրանք հասցնել քերականական կարգերի մակարդակին և ցույց տալ դրանց փոխկապակցվածությունն ու փոխայամանավորվածությունը, որոնք նրա գործաբանական ուղղությունն ապահովում են հաղորդակցման գործառնությունը» (Гальперин, 1981: 7): Տեքստը դիտարկելով որպես լեզվի գրավոր ձև, իրականության գծագրային արտացոլում՝ հետազոտողն առանձնացնում է տեքստի պարտադիր և երկրորդային տարրերն որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա: Ի. Գալպերինը տեքստի իրագեկությունը՝ բովանդակությունը, անվանում է ամբողջության լիարժեքություն, տեքստի հիմնակարգ և առանձնացնում է տեղեկատվության տեսակներ, որոնց շնորհիվ կարելի է դասակարգել տեքստը: Այսպես, նոտարական վավերագրերի



տեքստերը դիտարկվում են որպես պաշտոնական ոճի տեքստեր, իսկ ըստ բնույթի տեղեկատվությունը ստորաբաժանվում է դաշնագրերի, պայմանագրերի, վերջնագրերի, բողոքների և այլն: Այսպիսով՝ կամայական տեքստ կառուցված է լեզվում գոյություն ունեցող հաղորդագրության և լեզվական օրինակների համապատասխան: Օրինակները տարբեր են՝ կախված գործառական ոճից և նրա ժանրերից:

Ժամանակակից լեզվաբանությունն իր առջև նոր առաջադրանքներ է դնում՝ կատարելով միանգամայն նոր որակի ուսումնասիրություններ: Շ. Բալլիի, Լ. Ա. Բուլախովսկու, Վ. Վինոգրադովի, Գ. Վինկուրի, Լ. Շչերբայի, Լ. Յակուբինսկու գաղափարներն այն մասին, թե լեզուն տարբերակված է պատմականորեն դրսևորված տարատեսակներով, որոնցից յուրաքանչյուրը մի տիպաբանական միավոր է, հանգեցրել են ոճագիտության վերլուծության ընդհանուր և մասնավոր մշակումների: Լեզվի ոճական տարբերակման իրողությունը տեքստի լեզվաբանական տեսության նոր հիմնադրույթներ է ստեղծել: Իմաստին և բովանդակությանը նպատակաուղղված

տեքստերում լեզվական միավորների կազմավորման նոր հնարներ և նորմեր են հաստատվել:

Այսպիսով, գիտական յուրաքանչյուր ոլորտ մշակել է սեփական լեզվական նորմերն ու պահանջները, որոնց համապատասխան էլ ստեղծվում, ձևափոխվում և անգամ քննադատվում են տվյալ ոլորտի տեքստերը: Իրավագիտության մեջ, օրինակ, օրենսդրության լեզվական ինքնատիպությունը օրենսդրական ոճագիտության խնդիր է առաջ քաշել, որը լուծվում է իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում: Իրավագետների և լեզվաբանների այս բոլոր մտքերը հետազոտվող թեմայի հիմքում են ընկած:

Հաճախ վերլուծության առարկա են դառնում նախորդ դարաշրջանների օրենսդրական և գիտական տեքստերի բառագիտական և շարահյուսական առանձնահատկությունները, և համապատասխան հետազոտության հիման վրա եզրակացություն է արվում պաշտոնական ոճի կազմավորման և հատկությունների մասին: Գործնականում գոյություն ունի նաև պաշտոնական - գործառական ոճի զարգացում՝ կապված ծառայողական փաստաթղթերի խմբագրման, գիտատեխնիկական կամ

տնտեսագիտական – վիճակագրական տվյալների մեխանիկական զարգացման հետ (Веселов, 1982):

Խոսքի ոճական ուսումնասիրության կարևորագույն արդյունք կարելի է համարել լեզուն՝ իբրև արտահայտությունների հումանշային համակարգ (Л. В. Щерба), բառագիտական տիպաբանական ոճի հիման վրա ստեղծված բառագիտական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական միավորները (В. Виноградов, М. Кожина, Э. Розенталь և այլն), լեզվական միավորների 3 խմբի ձևավորումը՝ հատուկ, հարաբերական հատուկ և ոչ հատուկ կամ չեզոք, որոնց համադրումը սահմանում է գործառական ոճի կառուցվածքային ինքնատիպությունը (Ю. М. Скребнев, Д. Н. Шмелев), ոճի զարգացման ժամանակ լեզվական և արտալեզվական միավորների առանձնացումը (Л. И. Баранникова, М. Н. Кожина, В. Г. Костомаров, К. А. Логинова, А. К. Панфилов), ոճի հետագա զարգացումը սահմանող միտումի՝ միավորման և տարբերակման բացահայտումը (Н. С. Валгина, Т. Г. Винокур), գրականության լեզվի գործառական ազդեցության հաստատումը նրա քերականության վրա (А. Е. Кожин):

Պաշտոնական ոճը գրական ոճերի շարքում է և օգտագործվում է գրելու կերպով: Բանավոր ձևը իրենից ենթադրում է ելույթներ հանդիսավոր հանդիպումների, ընդունելությունների, դատարանների, պետական և հասարակական գործիչների զեկույցների և այլնի ժամանակ:

Պաշտոնական ոճն իր գրավոր և բանավոր տարբերակներով ծառայում է մարդկանց միջև փոխհարաբերություններին պաշտոնական ոլորտներում. օրինակ՝ փոխգործակցությունը պետական իշխանության և բնակչության միջև, տարբեր երկրների, կազմակերպությունների, գրասենյակների, մարդկանց և հասարակության միջև:

Պաշտոնական ոճի ժանրերը հայտնվում են իրավական ոլորտում ևս, որտեղ այս գործընթացում հիմնական դերը խաղում է իրավունքը՝ որպես հասարակական գիտակցության ձև՝ համապատասխան գործունեությամբ: Իրավունքը, որպես հասարակական գիտակցության ձև, պարունակում է կարծիքներ և հասկացողություններ իրավունքի ազդեցության և դրա կիրառման ներքո հանրային պրակտիկայում գոյություն ունեցող տարբեր իրավական երևույթների մասին: Ընդհանուր առմամբ, օրենք,

իրավունք, օրինականություն և իրավական պրակտիկայի այլ իրավական հասկացությունները, որպես արդյունք, ցանկացած դասի կամ հասարակության շահեր են, որոնք սահմանվում են որոշակի տնտեսական, քաղաքական, ներքին և մարդկանց այլ «իրական» հարաբերություններով (Фарбер, 1963: 91):

Այսպիսով, պաշտոնական ոճը, ծառայելով մարդկային գործունեության վարչական և իրավական հարաբերությունների ստեղծմանը, նպատակ ունի հաղորդակցման մասնակիցների միջև կարգավորելու իրավական հարաբերությունները: Պաշտոնական ոճում գերակշռում են գրավոր փաստաթղթերը, և դրսևորվող խոսքի տեսակը հիմնականում մենախոսությունն է: Պաշտոնական ոճի տեքստի հեղինակը իրավաբանը, իրավագետը, դիվանագետը պետական պաշտոնյան կամ էլ քաղաքացին է, իսկ հասցեատեր կարող են հանդիսանալ պետությունը, քաղաքացիները, հաստատությունները, կազմակերպությունները և այլն:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Арнольд И. В. Интерпретация текста как установления иерархии его частей.- В кн.: Лингвистика текста. Ч. 1 М. М., 1974, с. 28-32; Зарубина Н. Д. К вопросу о лингвистических единицах текста.- В

кн.: Синтаксис текста. М., 1979, с. 103-112; Звегинцев В. А. О Цельнооформленности единиц текста. – изв. АН СССР. Сер. лит. и яз., 1980, т. 39, N 1, с. 13-21; Черемисина М. И. Анафорические связи в тексте – В кн.: Лингвистика текста. Ч. П. М., 1974, с. 140-147.

2. Аспекты изучения текста. сб. науч. тр. /Ун-т дружбы народов им. Патриса Лумумбы.-М.” УДН, 1981.-137 с.; Исследования по теории текста: Реф. сб. / Редкол.: Москальская О. И. и др.- М.: ИНИОН АН СССР, 1979. -232 с

3. Бахтин М. М. (1979) Эстетика словесного творчества / М. М. Бахтин.-М.: Искусство, - 424

4. Бондарко А.В. Грамматическая категория и контекст. - Л.: Наука, 1971. - 115 с.; Ильенко С.Г. Функционирование предложения в тексте: Текстобразующие потенции и контекстуальные реализации. - В кн.: Функционирование синтаксических категорий в тексте. Л., 1981, с. 5-15; Николаева Т.М. Актуальное членение - категория грамматики текста. - Вопр. языкознания, 1972, № 2, с. 48-54.

5. Веселов П. В. Как составить служебный документ- М.: Экономика 1982. – 64 с.: его же Современное деловое письмо в промышленности. -2-е изд. –М.: Изд-во стандартов, 1970, 1970. Дюженко Г. А. Документная лингвистика . – М.: Статистика, 1975.-64 с. Иссерлин Е. М. Официально-деловой стиль. – М.: Моск. Полигр. Ин-т, 1970. – 40 с. Логинва К. А. Деловая речь и ее стилистические изменения в советскую эпоху.- В кн. : Развитие функциональных стилей современного русского языка. М., 1968, с. 186-230;Мегедь Е. Ю.

Лексико-семантическая сочетаемость в официально-деловом стиле речи: На материале советских дипломатических документов.- В кн.: Русское языкознание. Вып. 1. Киев, 1980, с. 124-128

6. Гальперин И.Р. Текст как объект лингвистического исследования. М.: Наука, 1981. - 139 с.

7. Гальперин И.Р. Текст как объект лингвистического исследования. М.: Наука, 1981. – с. 7

8. Гиндин С. И. Советская лингвистика текста: Некоторые проблемы и результаты /1948-1975/ . –Изв. АН СССР. Сер. Лит. И яз., 1977, т. 36, Н 4, с. 38-361; Фигуровский И. А. Основные направления в исследованиях синтаксиса целого текста. – В кн. Лингвистика текста: Мат. Науч. Конф. Ч. П. М., 1974, с. 108-115.

9. Ильенко С. Г. Связный текст как лингвометодическая проблема. в кн.: Герценовские чтения. Фил. Науки: Краткое сод. Докладов. Л., 1972, с. 67-69; Пеньковский А. В. Шварцкопф Б.С., О трех типах текста-образца.-

10. Кожина М. Н. Соотношение стилистики и лингвистики текста. – Науч. докл. высш. школы. Филол. науки, 1979, N5, с. 62-68; Одинцов В. В. Стилистика текста.- М.: Наука, 1980. -263 с.: Пеньковский А. Б., Шварцкопф Б. С. К вопросу о текстовых нормах. – В кн.: Лингвистика текста. – Ч. 1. М., 1974, с. 214-218.

11. Лотман Ю.М. Анализ поэтического текста: Структура стиха. - Л.: Просвещение, 1972. - 271 с.; Сильман Т.И. Структура абзаца и принципы его развертывания в художественном тексте. - В кн.: Те

ретические проблемы синтаксиса современных индоевропейских языков. Л., 1975, с. 208-216.

12. Одинцов В.В. Стилистика текста. - М.: Наука, 1980. - 263 с.

13. Фарбер И.Е. правосознание как форма общественного сознания, 1963, с.206

14. Щерба Л. В. О тройном аспекте языковых явлений и об эксперименте в языкознании. – В его кн.: Языковая система и речевая деятельность. Л., 1974, с. 26.